ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ

Սիրելի Սրբազան,

Ուրախութեամբ տեղեկացանք, որ Տիրախնամ Ձեր թեմի Թեմական Խորհրդի եւ հաւատաւոր ժողովրդի կողմից կազմակերպուում է Ձերդ Սրբազնութեանը նուիրուած մեծարման հանդիսութիւն՝ Ձեր եպիսկոպոսական ձեռնադրութեան քառասնամեայ յոբելեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները եւ գոհունակութեամբ անդրադառնում վաստակաշատ հոգեւորականիդ երկարամեայ բեղուն գործունէութեանը:

Հոգեւոր նախնական կրթութիւնը Դուք ստացաք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց ժառանգաւորաց վարժարանում, այնուհետեւ ուսումնառութիւնը շարունակեցիք Սուրբ Էջմիածնի Գեւորգեան Հոգեւոր Ճեմարանի աւանդաշատ յարկից ներս՝ վայելելով երջանկայիշատակ Գեւորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական բարեխնամ հովանաւորութիւնը:

Այսօր Մեր Եկեղեցու անդաստանում բարեջան սպասաւորութեան շուրջ կէսդարեայ վաստակն է Ձեր ուսերին, որոնցից 44 տարիները Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերում՝ որպէս առաջնորդ: Ձեր ծառայութեան ընթացքում Դուք մեծ ներդրում էք բերել թեմական կառոյցների կազմակերպման եւ Մայր Հայրենիքից հեռու ապրող հայորդիների հաւատն ու հայրենապաշտ ոգին ամրացնելու, նրանց հոգիներում առ Հայրենիքն ու Մայր Եկեղեցին սէրն ու նախանձախնդրութիւնը զօրացնելու պատասխանատու գործում:

2002 թ. Հովվապետական անդրանիկ այցելութեամբ Մենք եղանք Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերում՝ ակնատես դառնալով առաջնորդական Ձեր երկարամեայ նախանձաւոր ծառայութեան վաստակին, որով Դուք արժանացել էք հաւատաւոր սիրեցեալ մեր զաւակների ջերմ սիրուն ու յարգանքին: Լիայոյս ենք, որ շնորհիւ Ձեր ջանքերի, օրաւուր պիտի զօրանայ թեմի հայորդեաց հաւատն առ Աստուած եւ սէրն առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Սիրելի Սրբազան, Ձեր յոբելեանի առիթով Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ տասնամեակների Ձեր բազմարդիւն հոգեւոր ծառայութեան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսեւորած սիրոյ ու հաւատարմութեան համար եւ շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը զօրավիգ լինի Ձեզ՝ շնորհելով ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի արեւառատ տարիներ եւ մշտանորոգ հաջողութիւններ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Բարին Աստուած հանապազ օրհնութեամբ հաստատուն պահի Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց Տիրախնամ թեմերը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Յունիսի
Յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 250